

3257

3258

3259

3260

9(47.92S)

4-92



30/ 900 Մ. Խ. Պ. Ա. Հ. Ա. Հ.

9147.92S

4- 92

№ 6

ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ

Խ Ս Բ Ի

ԱՐՇԱԽԱՆՔԸ

(Աքսորվածների պատկերով)



Վ. Ի Ե Ն Ա Ա

Հ. Յ. Դաշնակցութեան ազատ սպառան

1894

Ձ. Ձ.

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

(Հայոց պատմագիրքների)




37169-66

2004 50970-4-



12012

ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ ԽՄԲԻ ՍԻՐԻ ԱՔՍՈՐՎԱԿՆԵՐԸ



- |   |                                   |                                     |
|---|-----------------------------------|-------------------------------------|
| 1. Սարդիս Կուկունեան՝ Ախճայի<br>Կոստանդնուպոլիսի քաղաքացի | 9. Սահմուկ Գալուտեան՝ Ճշեցի       | 17. Բարսեղ Գամանջեան                |
| 2. Կոստանդնուպոլիսի Լեռնիստան՝ Թղթականի քաղաքացի          | 10. Գօթօնան՝ Ժշեցի                | 18. Ամերգան Բոշեան՝ Հղուակեցի       |
| 3. Պուրին Օուլցանիստան՝ թղթականի քաղաքացի                 | 11. Աւետիս Մանուկեան՝ Բասնեցի     | 19. Միհամ Օզբականցի՝ Կարնեցի        |
| 4. Մանուկ Գալուտեան՝ Ժշեցի                                | 12. Եղիշեմ Կարթեան՝ բարոնութեցի   | 20. Գևերոս Կրիստիանի՝ Տայոցի        |
| 5. Իջևած Վիկասեան՝ ինժեների                               | 13. Շավելեան՝ Ավետիս              | 21. Մովսէս Մելքոնութեան՝ գեղասարցի  |
| 6. Աւետիս Մարտիրոսեան                                     | 14. Մուրադ Ղազարյան՝ Հոռոմոցի     | 22. Արգամ Ալեքսանդրանցի՝ Տայոցի     |
| 7. Սարգս Ջինիստան՝ օտարերկանի եղանակի                     | 15. Հաճի Կարապետ Բայջանան՝ Տայոցի | 23. Կրիստին Կըլլէցէրան՝ արքայի կեցի |
| 8. Միշտիչ Հաճի Դանիէլեան՝ Տայոցի                          | 16. Առուելի Դեմքի Եղանակի         |                                     |
- (Ճենաւ օգոստոսին Բայջանանուուժի)

ԿՈՒԿՈՒՆԵԱՆԻ



Խ Մ Բ Ի Ա Ր Ը Ա Լ Ա Ն Ք Բ Շ Ա Հ Ա Ն

Հայկական յեղափոխական շարժումը նոր չէ. նա  
սկիզբն է առել 30 տարի սրանից առաջ մօտաւորա-  
պէս 60-ական թուականներին: Նա ունի իր ան-  
ցեալը, իր չեղուները: Բայց նա աւելի լայն ծառալ ա-  
ւելի լայն սահմաններ է ընդունում Ռուս-Տաճկական  
պատերազմից յետոյ, 80-ական թուականների հրզումի և  
Սասունի շարժումներով, որ նորից կենդանութիւն, կեանք  
է առնում 1890թ. Երզումի ցցցով, որի արձագանքն  
էր և Պօլսի ցոյցը: Նա փոքր առ փոքր մեծանում, լայ-  
նանում է, տարածվում, մուտք է գործում ժողովրդի  
բոլոր խաւերը: Մասնակցում էին բոլորն առանց խըտ-  
րութեան գիրքի, հասակի՝ հայ մշակից սկսած մինչեւ ու-  
սանողը, վաճառականից մինչեւ հոգեորականը: Իրօք, մի  
անմոռանալի, անջնջելի տպաւորութիւն էիք ստանում,  
երբ տեսնում էիք այդ շարժման ծայրը հասած նոյն իսկ  
բուն Հայաստանից հեռու վայրերը, ուր ոչ պակաս ոգե-  
ւորութիւն էր տիրում: Երիտասարդութիւնը մի արտասո-  
վոր եռանդով անցած էր ժողովրդական պյտ վեհ շարժ-  
ման գլուխը: Ժողովներ էին տեղի ունենում, զանազան տե-

սակ իմբեր կազմակերպում, ծրագիրներ մշակում և գործում:

1890թ. Էրզրումի ցոյցն էր, որ նորից սթափեցրեց հայ ժողովուրդը և յառաջ բերաւ վերջին շարժումը: Հայ յեղափոխականների երկար տարիների ջանքերն ու աշխատանքն ստեղծել են Էրզրումի և Պօլսի ցցցերը, իսկ վերջիններս ծնունդ տուին այն կենդանի շարժման, որով այսօր բունվածք է բովանդակ հայ ժողովուրդը: Այդ շարժման արդասիքն է և Կուկունեանի Խմբի արշաւանքը, որ մենք կաշխատենք համառօտակի պատմել:

—ο—

1890թ. ամառն էր, երբ Կուկունեանը, Թողնելով Պետերբուրդի համալսարանը, եկաւ Կովկաս Տաճկահայաստան գնալու նպատակով: Պետերբուրդում նրան միացել էին նրա երկու ընկերները՝ Ռուբեքն Յովլյաննիսեան և Կոստանդին Լիսինեան: Այս համակրելի երիտասարդները թողել էին իրենց խաղաղ կեանքը, ոգեւորված սուրբ գործով, շտապում էին դէպի կոռուի դաշտը, դէպի Տաճկահայաստան: Նրանք գիտեին՝ որ իրենք պիտի զոհվին և գուցէ շատ շուտով: Բայց մեռնել մի վսեմ, բարձր գալափարի համար, մահ ստանալ մի խեղճ, գարերով ճնշված, հարստահարված, իսկ այժմ կենդանութեան նշայլներ ցցց տուող ժողովրդի ազատութեան գործի համար, երբ համոզված ես, որ տասնեակներով հարիւրներով յաջորդ-

ներ կունենաս, երբ համոզված ես, որ քո մահով յեղափոխական գործը մի քանի քայլ յառաջ կընթանայ, այս նրանց ոյժ, քաջութիւն էր տալիս, նրանց խրախուսում, քաջալերում էր:

Կուկունեանն իր երկու ընկերներով թիֆլիզ էր եկել որտեղ նա մնաց մի առժամանակ: Հենց այստեղ նրանց միացան 15 քաջ երիտասարդներ, որոնց մէջ կային տաճկաստանցիք և պարսկաստանցիք: Կուկունեանը սրանց բաժանեց երկու փոքրիկ խմբերի և նրանց հետ միացնելով իր երկու ընկերներին, ձանապարհ գցեց. Ղարսի նահանգը: Նա որոշել էր տեսակցութեան տեղը և ժամանակը: Խնդին էլ, վերջացնելով մի քանի անհրաժեշտ պատրաստութիւններ, ձանապարհ ընկաւ նոյն ուղղութեամբ:

Ղարսի նահանգի և Ալէքսանդրոպոլի գաւառի ժողովուրդն այդ ժամանակ մի տեսակ իրարանցման, շարժման մէջ էր. Էրզրումի դէպքը նրան սթափեցրել ցնցել էր: Այժմ նա լսում է, որ մի հրոսակային խումբ է պատրաստվում, որ անցնի գնայ Տաճկահայաստան: Եւ Շիրակն անտարբեր չմնաց: Քիչ է ասել՝ „անտարբեր չմնաց“: Դա պարզ չի որոշում, դա չի արտայայտում այն ոգեսրութիւնը, այն կենդանի մասնակցութիւնը, որ ունեցաւ այդ երկրի ժողովուրդը 1890թ. անցքերի ժամանակ: Այն դէպքերը, այն ցցցերը, այն վեհանձն, անձնուրաց գործերը, որոնց վկայ էին լինում Կուկու-

նեանը և իր խումբը, մի խօսուն ապացոյց էին ժողովրդի հասունութեան: Դա մի գեղեցիկ տեսարան էր, մի անման, աննկարագրելի պատկեր:

Կուկունեանի խումբը ցրված է մի քանի գիւղերում՝ կարգադրութիւնների է սպասում, որ յառաջ ընթանայ: Ի՞նչպիսի ուրախութիւն, բերկութիւն է տիրում այդ գիւղերում խմբի անդամների ներկայութեամբ: Գիւղացու ուրախութեանը չափ չէր լինում, երբ նրան յաջողվում էր անդամներից մէկին իր տունը հրաւիրել հիւրասիրել: Այդ ժամանակ միւս գիւղացիք բերում էին այդտեղ իրենց ամենաընտիր կերակուրները, որ իրենք էլ մասնակցած լինեն այդ հիւրասիրութեան: Կանայք նրանց ոտքերն էին լուանում և իրենց գործած գուղպաները հագնում, այդ կերպ յայտնում իրենց սէրը, իրենց համակրանքը:

Երկրի երիտասարդութիւնը ոգեսրված՝ ամեն կողմից տասնեակներով գալիս ինդում, աղերսում է Կուկունեանին՝ իրենց ևս ընդունել իր խմբի մէջ: Կուկունեանը նպատակ չունէր, նոյն իսկ անկարելի էր այն ժամանակ մի քանի հարիւր հոգուց բաղկացած խմբերով անցնել սահմանը. և նրա խմբի անդամների թիւը հարիւրների կը հասնէր, եթէ նա բոլոր իրեն դիմողներին ընդունէր խմբի մէջ. այդ պատճառով նա մերժում էր, թէև չկարողացաւ բոլորին զանց առնել այդ աղերսանքները մանաւանդ երբ շատերը, նկատելով

Կուկունեանի յամառութիւնը, ուղղակի պահանջում էին յանուն ոգործիկ իրենց էլ ընդունել:

Այստեղ մենք պիտի պատմենք մի քանի գեպքեր, ուր փայլում է հայ կնոջ վսեմ, բարձր բնաւորութիւնը: Հայուհու բնաւորութեան պյու գծերը հարկաւոր է ոսկէ տառերով արձանագրել մեր յեղափոխական պատմութեան էջերում:

Այս գեպքերից մէկը տեղի է ունենում Ալէքսանդրօպօլի շրջակայ մի գիւղում, ուր իջած էր Կուկունեանը իր մի քանի ընկերներով: Մի առաւօտ նրանք պիտի այդտեղից հեռանային: Լուսաբացին էր, ամբողջ գիւղը ոտի վրայ էր արդէն, նա շրջապատել էր մեր հիւրասիրական խումբը: Կանայք արտասուալից աչքերով նրանց ձամբու պաշար էին տալիս, տղամարդիկ խրախուսում, քաջալերում էին, իսկ երիտասարդները երդվում էին նրանց հետեւել երբ, Կուկունեանի ասելով պատեհ ժամը կը զարկի: Տղերն արդէն ձիու վրայ նստած պատրաստվում էին ձանապարհ բնկնել գիւղի քահանան կարգում է „Տէր, ողորմեան և բարի ձանապարհ մաղմում: Բոլորն էլ զգացված են, ձամբորդները հազիւ են զսպում իրենց արտասուալը: Այդ միջոցին մօտենում է Կուկունեանին մի պառաւ կին, որին չետեսում է ձամբորդի հագուստով մի երիտասարդ: — Պուրբան էղնիմ քզի, Սարգիս-բէկ ջան(այդպէս էին անուանում Կուկունեանին Պարսի և Ալէքսանդրօպօլի

կողմերում), ասում է պառաւը, աղաջանք մ'ունիմ:

— Ի՞նչ է, մայրս, հարցնում է կուկունեանը:

— Աստուծու սիրուն, ինդիրս կատարէ: Էս տղան կը տեսնիմ, իմ մեծ տղաս է, էսոր քո հետ պիտի տանիս. մեր Լուսաւորչայ սուրբ հաւատուն, մեր խեղճ՝ աղբերանց սիրուն էսոր մատաղ պիտի էնե՛ս: Ես էլի զաւակներ ունիմ, էնոնց երբ պէտք լինի, կը դրկեմ էդ սուրբ գործին:

Դժուար չէ երկակայել թէ ինչ տպաւորութիւն, ինչ աղդեցութիւն կը դործէին պառաւ մօր աղդասիրական այդ անկեղծ ցանկութիւնը: Պառաւի խօսքերից յետոյ մի ըոսէ խորին լուսութիւն է տիրում. բոլորն էլ խորը զգացված են այդ վեհ տեսարանից, բոլորի աչքերից հոսում են արտասուզի խոշոր կաթիլներ:

Կուկունեանն անել դրութեան մէջ էր. մի կողմից պառաւ մօր թախանձանքը՝ ընդունել իր որդուն ևս իր խմբի մէջ միւս կողմից վերջինիս օր օրի վրայ մեծանալը, լայն սահմաններ ընդունելը: Բայց այդ տեսարանի աղդեցութեան տակ նա չկարողացաւ չայրենասէր մօր նուէրը մերժել այդ նուէրն ևս ընդունում է իր խմբի մէջ: Պառաւ մայրը հեկեկալով չամբուրում է կուկունեանի ոտները: Դրա որդին 20-21 տարեկան երիտասարդ էր, անունը Մուկուչ:

Սոյնանման մի այլ գէպք տեղի ունեցաւ Պարսում; ուր կուկունեանը գնացել էր „Դաշնակցութեան“

գործակալի հետ տեսնվելու: Նա իր 5-6 ընկերների հետ նստած է լինում մի տան մէջ: Ներս է մտնում մի պառաւ կին նոյնպէս իր որդու հետ միասին և ասում է.

— Խնչպէս որ դուք կերթաք ձեզ ազգին նուիրելու, էս իմ տղաս էլ կուզէ ձեզի հետ գալ: Էսիկ իմ մէկուձար տղէս է, Աստուծոյ առջև մնակ էսոր ունիմ, տարեկ էսոր հետներդ, տարեկ, թողլ զոհի այդ սուրբ գործի համար: «Պառաւը վերջացնում է իր խօսքերը, այլ ևս չի կարողանում իրեն զապել լալով դուրս է վազում: Դրա որդին Դարբին Ստեփանն էր. դա ևս ընդունվում է խմբի մէջ:

Այսպեղ այս անցքերը պատմելիս ակամայ մեր յիշողութեան մէջ զարթնում են Բօլղարիայի յեղափոխական կեանքի յար և նման դէպքերը: Ընթերցող անշուշտ դու կարդացած կը լինիս այդ կեանքից վերցրած փոքրիկ պատմութիւնները և „Լուսադիմին“ վեպը: Անշուշտ դու յիշում ես պառաւ Տօնկայի տիպը: Դա այն կինն էր, որ յանուն Բօլղարիայի աղատութեան ինքն իր ձեռքով հրեց, գցեց իր հինգ տղաներին և երկու աղջկան յեղափոխական գործունեութեան դաշտը: Մէթէ նոյն այժմ մեզանում չի կատարվում: ձեզ ապացոյց վերև բերած օրինակները: Այս, մեզանում այժմ նոյնն է կատարվում, նոյնը կրկնվում: Երբ դուք մտքով թերթում էք Բօլղարական յեղափոխու-

թեան պատմութիւնը, երբ ձեր մաքովի էք անցնում  
այդ յեղափոխութեան բոլոր ֆազերը, դուք գտնում  
էք մեր այժմեան դրութեան հետ մի ակներե, աչքի  
զարնող նմանութիւն։ Դուք այդ պատմութեան մէջ  
տեսնում էք միևնոյն պայմանները, միևնոյն դրութիւ-  
նը, միևնոյն ձնշումները, միևնոյն աձնազոհութիւնները,  
ժողովրդական նոյն շարժումները, ցոյցերը, դիմադրու-  
թիւնները, նոյն հրոսակային խմբերը, ապա այդ բոլո-  
րին հետևում է ընդհանուր մեծ յեղափոխութիւնը,  
ապա և Բօլղարիայի ազատութիւնը . . .

Աերադառնանք. մեր պատմութեան։ Հենց պյստեղ  
նկատենք, որ վերսիշեալ երկու անձնուէրները՝ թէ  
Մուկուչը և թէ Դարբին Ստեփանն իսկապէս զոհվե-  
ցան, երկուսն էլ սպանվեցան։

Առաջ բերենք հայ կնոջ մի պյլ օրինակը։ Կուկու-  
նեանին մի գիւղում մօտենում է մի 35-40 տարեկան  
կին և ուղղակի առաջարկում է իրեն ևս ընդունել  
հրոսակային խմբի մէջ։ «Ես որբեայրի եմ, ասում է  
նա, հինգ տարեկան զաւակ ունիմ միայն. նրան էլ  
գիւղը կը պահի, եթէ ինձ խմբի մէջ ընդունեա։ Ես  
ծանրութիւն չեմ լինիլ ես թէ լաւ ձի նստել և թէ  
լաւ հրացան արձակել գիտեմ. սյս բոլորը գիւղացիք  
գիտեն։» Ներկայ եղող գիւղացիք վկայում են կնոջ  
քաջութիւնը, որ նա ցոյց է առել հարեան թուրք  
գիւղացիների հետ պատահած յաճախակի ընդհանու-

ների ժամանակ։ Բայց և այնպէս կուկունեանն անյար-  
մար գտաւ ընդունել այդ արի հայուհուն խմբի մէջ։

Կուկունեանի խումբն օր օրի վլրայ մեծանում էր. ան-  
դամների թիւը հասնում էր 80-ի։ Այդ ազնիւ, գոր-  
ծին ամբողջովին նուիրված, միմեանց հետ սերտ սիրով  
կապված քաջ երիտասարդների մէջ էին անուանի „Ղա-  
չաղ“ Սարդարը՝ Ալեքսանդրօվոլիք գաւառից, զարաբաղ-  
ցի անվեհեր Արբահամը, բուլանսղի նատօն և պյլն։

Կուկունեանն իրեն ազատ էր պահում դէպի ռուս  
կառավարութիւնը։ Նա միմիայն զգուշացնում էր խմբի  
անդամներին անկարգութիւններից և սպանութիւննե-  
րից, որ նրանք կարող էին գործել ռուսաց սահման-  
ներում։ Տղերը բաժանված էին մանրիկ խմբերի՝ զե-  
տեղված հայ գիւղերում։ Կուկունեանը նրանց ժամա-  
նակ ժամանակ այցելում էր, իր ընկերների, գլխաւո-  
րապէս, զարաբաղցի Արբահամի միջոցով նրանց ուղար-  
կում էր փող, ծխախոտ և պյլ անհրաժեշտ պիտոյք-  
ներ, որ գիւղացիների մօտ սակաւ են կամ բոլորովին  
չեն գտնվում։ Խմբի անդամներից մի քանիսը, որոնք լաւ  
հմուտ չեն հրացանաձութեան մէջ, գնում էին ձո-  
րերը և հմուտ անձանց հսկողութեան տակ վարժվում  
էին։ Աւելորդ է ասել որ տղող բոլոր հրացաններն այ-  
նալու և բերդանկաներ էին։

Արդէն Սեպտեմբեր ամիսն էր, բայց կուկունեանի

Խոռմբը դեռ գիւղերում ցրված՝ սպասում էր անշամբեր: Խմբի անհրաժեշտ պատրաստութիւնները և միքանի կողմնակի պատճառներ արգելք էին լինում սահմանն անցնել: Ժամանակը բաւական անկյարմար էր. աշունն արդէն եկած, էսօր էգուց կակսվին ցրտերը և խոռմբը դեռ ոչ բոլորովին պատրաստված: „Դաշնակցութեան” վարչութիւնը, ի նկատի ունենալով այս հանդամանքները, առաջարկում է Կուկունեանին Տաճկահայաստան գնալը յետաձգել հետեւեալ գարնան, երբ եղանակները պարզված կը լինեն, սարերն ազատվածիւնից—մի հանդամանք, որ շատ կարեոր է հրոսակային խմբի համար:

Այստեղ մենք առաջ ենք բերում այդ առիթով վարչութեան Կուկունեանին գրած նամակներից մի քանի կը տորներ: Այդ նամակները բունված են եղել Կուկունեանի մօտ և զետեղված են Երևանի նահանգական գատարանի մեղադրական արձանագրութեան մէջ, որից մենք թարգմանօրէն քաղուածք ենք անում: „Գալով այն համոզմունքին, կարդում ենք մենք այդ նամակներից մէկի մէջ, որ նախ և առաջ անհրաժեշտ է տաճկահայերին զէնք մատակարարել, Վարչութիւնը լիազօր իրաւունք է տալիս Կուկունեանին այդ նպատակով բանակցութեան մէջ մըտնել Պարսի տեղական խմբի հետ, որպէս զի որբան կարել է շուտ իրագործել այդ էական պահանջը, ստանալ Պարսի խմբից հարկաւոր միջոցները, պատրաստել իր

ձեռքի տակ գտնվող մարդկանցից մի խմբակ, որ ընդունակ լինի զբաղվիլ զէնք տարածելով: Մի այլ նամակով, ծածկագրերով գրած, Վարչութիւնը յայտարարում է Կուկունեանին, որ ոռու կառավարութեանն արդէն յայտնի են նրա բոլոր գործողութիւնները, ուստի նա խորհուրդ է տալիս Կուկունեանին անմիջապէս անցնել Տաճկաստան, միայն ոչ ամբողջ խմբով այլ իր 5 լոկերներով: Երբորդ նամակով Վարչութիւնը յայտնում է իր վճիռը: Նա առաջարկում է Կուկունեանին մի փոքրիկ խմբով անցնել սահմանը, իսկ մնացած տղոցը զետեղել զանազան տեղերում: Միայն ոչ Պարսի նահանգում և ոչ էլ իրենց ծննդավայրում: Կուկունեանը համաձայն չէր այդ առաջարկութեան, մասաւանդ դէմ էին խմբի միւս անդամները: Վերջիններս յամառութեամբ մերժում էին այդ առաջարկութիւնը: Նրանց համար շատ ծանր էր նորից տուն վերադառնալ կամ ապրել երկար ամիսներ հասարակութեան հաշով մի որ և է գիւղում: Բացի այդ՝ նրանցից շատերի անունները յայտնի եին ոռու կառավարութեան և նրանք չէին կարող ազատ իրենց գործով զբաղվել: Վարչութեան և խմբի բարակցութիւնները սուր կերպարանք են ստանում: գալիս են վարչութեան անդամներից երկուսը, բայց գարձեալ անյաջող: Խոռմբը մերժելով մերժում է, համարելով հակառակ քայլը գործի դաւաճանութիւն: Իրօք, շատ ծանր էր ըովէն, պարզ էր, որ խոռմբն այդպիսի անբարեյա-

զող պայմաններում չպիտի կարողանար ի կատար ածել իր ծրագիրը: Երկար բանակցութիւններից յետոյ որոշ վում է թուլ տալ խմբին անցնել սահմանը, միայն մաս մաս, ցըլել Տաճկահայաստանի գիւղերը, գաղտնի պրոպագանդա անել այդպէս մնալ մինչև գարուն, գարնանը խմբվել մի տեղ և, եթէ պայմանները թուլ կը տան, յարձակողական դիլք բռնել: Այդ առաջարկութիւնը խմբի կողմից հաւանութիւն է գտնում և ընդունվում: Խսկ յետոյ թէ ինչ պատահեց, ինչ փոփոխութիւն տեղի ունեցաւ խմբի մէջ, դա մեզ յայտնի չէ. այսքանը միայն պարզ է, որ խումբը որոշել էր իր նախկին ծրագրով գործել այսինքն ամբողջ խմբով սահմանն անցնել:

Այստեղ մենք չենք մեղադրում խմբի անդամներին, իրօք, պայմաններն անյարմար, անբարեյաջող էին, բայց մի և նոյն ժամանակ խումբը գտնվում էր պյանդիսի հանդամանքների հանդէպ, որ այլ կերպ գործել, այլ ձևով վարվել, ոչ այնպէս, ինչպէս իր նախկին ծրագիրըն էր թելագրում, ուղղակի նա անկարող էր, իր ուժերից վեր էր: \*

Թէ այսպէս թէ այնպէս, որոշվում է հենց սեպտեմբերին անցնել սահմանը: Այդ ամսի 22-ին խումբն իր ամբողջ կազմով արդէն գտնվում էր 2իւրիւկ գիւղումը: Անդամների թիւը հասնում էր 78-ի, որոնցից 24 ձիաւոր:

Հետեւեալ օրը կիւրակի էր, խումբը ձանապարհ է

Ընկնում: Ճամբի վրայ գանվող գիւղերը ի՞նչպիսի ուրախութեամբ և ոգեռորութեամբ էին նրան դիմաւորում: Մի գիւղում քահանան նոյն իսկ Աւետարանով խաչով խաչվառով գիւղից դուրս խմբի համար մաղթանք է կատարում և այսպէս ոբարի ձանապարհ մաղթում: Ամեն կողմ ուրախութիւն, ամեն կողմ խնդում արտասուրք այդպէս էր ժողովուրդն ուղեկցում իր քաջերին:

Միւս օրը, լուսաբացին, հասնում են սահմանագլխի վրայ գտնվող Զիչէկլուայ ձորը: Այդտեղ իջնում են, իսկըն հաւաքում են տաշեղ փայտ, խարցի պատրաստում: յուրադը բաւական զգալի է լինում: Խումբ խումբ նստոտում են խարցիկ շուրջը, բանում իրենց պաշարը: Պաշար նրանք վերցրել էին այնքան, որքան կարող էին, գիւղացիք նրանցից ոչինչ չենայել: Մի քիչ հանգստանալուց յետոյ պիտի շարունակէին յառաջ ընթանալ:

Խումբն իր հետ պատրաստած ունէր երկու գրօշակ, որոնցից մէկի վրայ ձեռքով նուրբ գործված էր Գրիգոր Լուսաւորչի պատկերը, իսկ միւսի վրայ մի առիւծ և սրա ոտի տակ — կիսալուսին: Տղերը բոլորն էլ իրենց ուսերի վրայ կրում էին զինւորի էպոլետներ, իսկ Կուկունեանը և Սարդարը զինւորական սպայի, այդ էպոլետների վրայ կարած էր „Մ. Հ.“, այսինքն սՄայր Հայաստան: Այս էպոլետներն այն նպատակով էին տղերը կրում, որ հարկաւոր եղած ժամանակը կարո-

ղանան սահմանապահ՝ զօրք ձեւանալ:

Խումբն արդէն պատրաստ կանգնած է, դրօշակները պարզում են: Խոմբի միջից դուրս է գալիս Սարդարը, կանգնում բոլորի դիմացը և զգացված ձայնով մի ազդում ձառ է արտախանում: Նա նկարագրում է մեր տաճկահայ եղբայրների քաշած նեղութիւններն ու տանջանքները նրանց ստացած անվերջ նախատինքն ու վիրաւորանքները. կենդանի գցներով պատկերացնում է նրանց անարդ ստրկական վիճակը, նրանց սրբութիւնների խախտվիլը, նրանց կոյսերի լլիկին ու բռնաբարվիլը. կանգէ առնում տաճկական բանդի ու կապանքների, պետութեան և քրդերի անհունանհամար դազանութիւնների վրայ . . . Բացատրում է դրօշակի նշանակութիւնը, մի քանի կարեոր գործնական խորհուրդներ տալիս, խրախուսում և քաշակերում: Բոլորն էլ զգածված են. խումբըն առաջ է շարժվում, դրօշակները ծածանում են . . .

Քիչ ճանապարհ անցնելուց յետ խումբը պատահում է մի քանի քրդերի, որոնք տղոց տեսնելով սկսում են փախչիլ: Կասկած չկար, որ նրանք պիտի գնային գիւղըն իմաց անելու. անհրաժեշտ էր պատրաստվել յարմար դիրք բռնել: Այդպիսի մի յարմար տեղ տաճկաց հողի վրայ դանվող Բօղ-Դաղն էր, բայց դժբախտաբար տղերըն այնտեղ բարձրանալու ճամբէն չգիտէին. իրենց հետ վերցրած թուլամորթ տաճկահայ ուղղեցոյցները քրդերին տեսնելուն պէս՝ թողել, անյայտացել էին:

Մինչեւ որ տղերքը ճանապարհ էին փնտրում, հեռուից արդէն հրացանի ձայներ են գալիս. խկոյն երևում են 20 ձիաւոր, այդքան էլ հետեւակ քրդեր. դրանք Տաճկահայաստանի Ախուար քուրդ գիւղիցն էին: Մեր տղոց տեղը շատ վատ էր. բայց բարեխախտաբար սյուրոպէին պատահում են երկու քրդի, որոնց օգնութեամբ նրանց յաջողվում է բարձրանալ Բօղ-Դաղ: Երբ քըրդերը տեսնում են տղոց ապահով դիրքը, վերադառնում են և բաւական հեռու տարածութեան վրայ սպասում, մերթ ընդ մերթ հրացան արձակում: տղերքը նըրանց չեն պատախանում, փամկուշտները ինսայում էին միենոյն է թշնամուն չեին համնիլ:

Բօղ-Դաղը շատ մօտ է տաճկաց Թոփրակ-Կալէին, մի կէս ժամուայ Ճամբայ Հազիւ լինի: Այդտեղ արդէն լուր էր տարածվել, արդէն գիտէին, որ նհայոց զօրքը գալիս է: Շատ չանցած՝ Թոփրակ-Կալէից երկում է տաճկաց նկանոնաւոր հեծելազօրքը և դէպի Բօղ-Դաղն ուղղվում: Սարդարն խկոյն տղոցը բաժանում է 4-5 հոգուց բաղկացած փոքրիկ խմբակների, զետեղում նրանց զանազան կէտերում: Վարարաղցի Զ-ի խմբակի դիրքը բոլորից մօտ էր տաճկաց հեծելազօրքին. Երբ Զ-ի խմբից առաջին արձակած գնդակը գնում, գիւղչում է զօրքի առաջնորդի ձիու ճակատին, տաճկաց զօրքն սկըսում է փառաւոր կերպով. . . յետ փախչիլ: Մերոնք ուղում են հետամուտ լինել նրանց, բայց Կուկունեանը

արդելում է: Տղերքը քաղցած, յոգնած, մութն էլ ընկնում էր, անհրաժեշտ էր մի այլ տեղ փոխվել, որովհետեւ տաճիկները կարող էին նրանց շրջապատել աւելի մեծ զօրքով՝ կոտորել կամ սովամահ անել: Բարեբախտաբար տղոցից մեկը՝ կարնեցի Մինասը շրջակայքին մի փոքր ծանօթ է լինում, նա կարողանում է առաջնորդել մինչև Թեաքա-Ֆինա կոչված ձորը: Այս տեղ տղերքն իջնում են, ստիպված են լինում այդ ձորում մինչև կէս գիշեր մնալ, որովհետեւ այդտեղից էլ ոչ ոք ձամբէն չէր ձանաչում: Վճռում են վերջապէս շարունակել ձանապարհն անտառի միջով՝ յուսալով, որ կը պատահին մի հայ գիւղի, որը նրանց համ կը կերակրէ, համ էլ ձամբայ ցոյց կը տայ: Այդպէս զնում են անտառի միջով. սաստիկ մութ, տեղն անծանօթ, բայց և այնպէս շարունակում են գնալ: Անցնում են բաւական մեծ տարածութիւն, լուսադիմին հասնում են Աղբուլաղ մեծ ձորի մօտերքը գտնվող մի փոքրիկ ձորակ: Այստեղ նրանց պատահում են եօթը թուրքեր, որոնք երեք եզներ էին տանում դէպի Ալաշկերտ: Տղերքն ուզում են նրանց բռնել երկուաը իսկոյն փախչում են, իսկ մնացեալ հինգը կամենում են դիմադրել հինգն էլ դժբախտաբար սպանվում են: Խորի պաշարն արդէն վերջացած է լինում, նրանք բռնում, մորթում են այն եզներից մէկը, խորովում և առանց աղ, առանց հաց ուտում: Մի փոքր հանգստանալուց

յետոյ ձանապարհը շարունակում են, գնում դուրս են դալիս Աղբուլաղ ձորը:

Այդ ձորը գտնվում է Կաղզուանից մի քանի ժամուայ տարածութեան վրայ: Այդտեղից տղոցից մէկը՝ Գրիգոր Թէքիրդաղին ձանապարհն է ընկնում դէպի Կաղզուան խմբի համար հաց բերելու բայց տեղին անծանօթ լինելով, ձանապարհը կորցնում է և գատարկ ձեռքերով վերադառնում տղոց մօտ: Խորովը հենց սկզբից անյաջողութիւնների է հանդիպում: Պաշարը վերջացած, հաց ձամբէլու փորձն անյաջող: Այս գրութիւնը սկըսում է զբաղեցնել տղոցը: Սարդարը և Աբրահամն առաջարկում են մի երկու ժամ հանգստանալ և անմիջապէս յառաջ ընթանալ դէպի Տաճկահայաստան, մըտնել երկրի խորքերը, այնտեղ կամ մեռնել կամ մի գործ տեսնել: Այս առաջարկութեանը միանում է խմբի անդամների միայն մի մասը, իսկ մեծամասնութիւնը՝ սրահետ և Կուկունեան՝ ընդդիմանում են: Կուկունեանն այժմ է միայն ըմբռնում „Դաշնակցութեան“, վարչութեան բռնած դիրքը, երբ նա աշխատում էր խմբի արշաւակը յետաձգել հետեւեալ գարնան: Այժմ Կուկունեանը տեսնում է՝ տղերքը համարեա թէ քաղցած, յոգնած, առանց ուղեցոյցների, եղանակը փոխվում էր, ցրտերը սկսվում, լեռները ձիւնով ծածկվում, իսկ խումբը ըլն իր օրերը պէտք էր այդ բարձրաբերձ լեռներում անցկացնէր: Այս բարձր հանգամանքները քննելով, նա

գալիս էր այն եզրակացութեան, որ թէ գործի յաջողութեան և թէ խմբի ապահովութեան համար աւելի նը-պատակայարմար էր վերադառնալ մի որ և իցէ տեղ. նա առաջարկում էր երևանեան նահանգի գիւղերը. ձը-մուն անցնելուց յետոյ գարնանն աւելի լաւ պատրաստված անցնել Տաճկահայստան: Խումբը համաձայն-վում է: Արդէն մութն ընկել էր, երբ խումբը ձանապարհ է ընկնում դէպի Կաղզուանի մօտ գտնվող Խար գիւղը: Բաւական ձանապարհ անցնելուց յետոյ անտառի մէջ կրակ են նկատում: Պարաբաղցի Զ.՝ը, Սահակը, գանձակեցի Եփրեմը և տաճկաստանցի Մէհրաբը խմբից բաժանվելով, ուղղվում են դէպի անտառի կրակը: Հասնում են, կրակի շուրջը նստած են լինում մի քանի թուրքեր, որոնցից երկուսը տեսնելով խմբի անդամներին, վազում, իմաց են տալիս Կաղզուան, խսկ միւս թուրքերը գիտմամբ տղոցը Խօսքի են բռնում. մինչ այս, մինչ այն, Կաղզուանից վրայ են հասնում ռուս կազակները: Դրանց յաջողվում է մերոնց ձերբակալել, բացի Զ.՝ից, որը փախչում, ազատվում է:

Այսաեղ մենք պիտի նկատենք, որ ռուս կառավարութեան դէպի խմբի անդամները բռնած գիրքը պախարակելի էր: Այդ խումբը և առհասարակ ամբողջ հայկական շարժումը ոչ մի առնչութիւն չունի ռուսաց կառավարութեան հետ: Խումբն իր ամբողջ գոյութեան ընթացքում ոչ մի բանով տեղիք չի տուել ռուս կառա

վարութեանը միջամտելու, իսկ առիթներ շատ են եղել, երբ խմբի անդամները կարող էին դիմագրել ռուսաց կառավարութեան ներկայացուցիչներին կամ նրա հպատակ հայերին թշնամի՝ տաճիկներին և քրդերին (Վարսի նահանգի): Վերցնենք հենց մի դէպիք: Տաճկաց Հկանոնաւոր հեծելազօրքը տղոց շնորհիւ ամօթալի կերպով փախչում է. տղերը տեսնում են այդ, նրանք ոգեսրված, տաքացած են: Հենց այդ ըուպէին նրանք սահմանի վրայ նկատում են մի քանի զինուոր, որոնք տղոցը տեսնելով, վերցնում են իրենց գլխարկները, խումբը հասկանում է, որ դա սահմանապահ ռուս զինուորներ են և ոչ մէկի հրացանը չի ուղղվում դէպի վերջիններս: Մենք յետոյ կը տեսնենք, որ խումբը միշտ աշխատել է խուսափել ռուս կառավարութեանը վնասելուց: Բայց չնայելով դրան, ռուս կառավարութիւնը, կրկնում ենք, պախարակելի կերպով վնասեց մեր գործին: Նա հետամուտ էր լինում տղոցը բռնել և, եթէ խումբը այնքան ժամանակ ազատ մնաց, դա հայ գիւղացու շնորհիւն էր, որ կարողացաւ շաբաթներով, նոյն խսկ ամիսներով ծածկել, իր աչքի լոյսի պէս պահել պաշտպանել մի ամբողջ խումբ... Ռուս կառավարութեան այդ տմարդութիւնը խմբի անդամները դատարանում մի քանի անգամ նրա երեսով տուին:

Այդպէս, տղոցից երեքը բռնվում են, զարաբաղցի Զ.՝ը փախչում է. նա ամբողջ գիշերը գէս ու գէն շրջելուց

յետոյ՝ հազիւ միւս օրը կարողանում է դժնել խումբը, որ տեղաւորված է Ենումը վերցիշեալ Խար գիւղի այդիներում:

Այժմ, լնթերցող, մենք պիտի պատմենք աւելի տը- խուր անցքեր, պիտի նկարագրենք աւելի ախուր տեսա- րաններ։ Այս, տխուր է, ցաւալի է տեսնել մը քաջ խըմ- բի անդամների մի մասը ձերբակալած, շղթայած, բան- տերը լթրած, միւսներին նենդօրէն սպանած։ մի մասն էլ փախած, սարեր-անտառներ լնկած։ Այս, ցաւալի է տեսնել մի խումբ քաջեր դեռ ոչինչ չկատարած, ըստ երեսյթին ոչ մի գործ յառաջ չտարած, տեսնել նրա պարտութիւնը, նրա տխուր վախճանը։ Բայց միթէ, իրօք, այդ խումբը ոչինչ չկատարեց, ոչինչ չարեց։ միթէ գրա- նից մը յեղափոխական գործը չօգտվեց։ Ոչ, սխալ է, անկարելի է չափել մի խմբի գործունէութիւնը նրա ձեռ- քով մորթած մարդկանց քանակութեամբ, նրա աւերած, քարուքանդ արած գիւղերի թւով, նրա արած յաղթու- թեամբ։ Միթէ կարծում էք, որ այն ոգեսրութիւնը, այն վեհ շարժումը, անձնազոհութեան այն օրինակները, այն սուրբ սէրը դէպի յեղափոխութիւնը, որ ներջնչեց, յա- ռաջ բերաւ այդ խումբը, անհետեանք մնացին։ Միթէ կարծում էք, որ դրանք մի ամբողջ սերունդ, մի ամբողջ ժողովուրդ չեն կրթում։ Միթէ գրանք նոր կուկունեան- եր, նոր Սարդարներ արդէն չպատրաստեցին։ Դա մեզ

ցոյց կը տայ մօտիկ ապագան, իսկ այժմ հետևենք տղոցը։ Ինչպէս ասացինք, նրանք իչել էին Խար գիւղի այ- դիներում։ Կուկունեանի պատուերով զէնքերը հաւաքել էին մի տեղ, իսկ իրանք այստեղ-այնտեղ խումբ խումբ նստած էին, ոմանք ուտում էին (գիւղացիք արդէն նը- րանց համար ուտելու պաշար էին բերել), ոմանք կե- րել հանգստանում էին, մի քանիսն էլ պարկած քնած էին։ Զինված էին միայն Սարդարը, Աբրահամը, Սու- կուչը, Զըր և Նատօն։ Հայոց փարբիկ ուրանակն « այս դրութեան մէջ էր, երբ յանկարծ նրան շրջապատում են ահագին թիւ կազակներ, որոնք անմիջապէս սկսում են հրացան արձակել ուղղակի տղաց գարսած զէնքերի վրայ։ Տղերըն սթափկում են։ Դարբին Ստեփանը վազում է գէ- պի զէնքերը՝ հրացան վերցնելու և վիրաւորլում է։ Իսկ այն զինված տղերը, ինչու նրանք իրենց զէնքերը չեն բանեցնում։ Երբ կազակները շրջապատում են տղոցը, կուկունեանը բարձրաձայն պատուիրում է չար- ձակել աչքի առաջ ունենալով, որ 4-5 զինված հո- գով չէր կարելի կաւել մի մեծ խումբ կազակների գէմ։ Շացի ալդ՝ նա նպատակ էլ չուներ ուուների գէմ գը- նալու, մանաւանդ որ կազակներն էլ հրացան էին ար- ձակում միմիայն տղոց զէնքերի կոյտի վրայ։ Բայց ահա այդ միջոցին կազակներին միանում են մի խումբ կատա- ղի քիւրդեր, որոնք սկսում են հրացան արձակել գէպի տղաները։ Տղոց դրութիւնն աւելի կրիտիքական է գառ-

նում. քիւրդերի օրինակին է հետեւում և մի կազակ. որը վիրաւորում է նատօյին: Երբ մեր զինված տղերը տեսնում են քաջ նատօյի ընկնելը, միայն այն ժամանակ էլ չկարողանալով իրենց զսպել, սկսում են հրացան արձակել դէպի այդ չարաբաստիկ կազակը և 5 գնտակ միմանց յետեից երում են նրա կրծքի մէջ: Նատօն հոգին աւանդում է, բայց մեռնում է և այն կազակը: Տղայքն առանց զէնքի, իսկ գնտակները շարունակում են տեղալ ուրիշ ելք չէր մնում, բացի փախչելուց: Ակսում են փախչել. որը սարն է վազում, որը դէպի կաղզուան, որը դէպի զարաբաղ անունով հարեւան գիւղը: Բայց փախչել բոլորին չի յաշողվում, մեծ մասը բռնվում է ձերբակալվում է: Ձերբակալվում է և կուկունեանը, որը սկզբում կամցել է փախչել բայց տեսնելով որ շատերը բռնված են արդէն, վճռում է ինքը ևս մնալ տղոց հետ միասին ներկայանալ դատարանի առջև, պարզէ ի պարզ բացատրել իր խմբի նըպատակը: Փախչողների թւումն էին Սարդարը, Աբրահամը, Մուկուչը և Զըր. սրանց յաշողվում է մի կերպ ձի նստել ու քշել: Զնայած, որ կազակներն իսկոյն դըրանց յետեից են ընկնում, բայց բռնել չի յաշողվում: միայն վիրաւորում են Աբրահամին: Զըր սրան հազիւ պահելով ձիու վրայ, կարողանում է ապահով տեղ հասցնել: Իսկ Սարդարն ու Մուկուչը գնում, մտնում են մի քիւրդի գիւղ, իջնում Սարդարի ոքիրպայի տանը պատս-

պարվելու համար: Բայց նրանց այդ անզգուշութիւնն իրենց մահուան պատճառ դառաւ: Գիշերը նենդ ոբարեկամները՝ նրանց երկուսին էլ քնած ժամանակը խեղում են: Այսպիսի մի տիուր վախճանի արժանացաւ յայտնի ողաչաղ՝ Սարդարը՝ մեր յեղափոխական ուժերից ամենափորձածներից մէկը: Այս, այդ քաջ հերոսի կորուստը մեզ համար զդալի, անփոխարինելի է: Ցաւալի է նյուպէս և Մուկուչի մահը. դա այն երիտասարդն է, ընթերցող, որին մայրը բերեց, նուիրեց Կուկունեանին, ասելով. «Մեր խեղձ աղբերանց սիրուն էսոր մատաղ պիտի էնես:»

Այդպէս, տղոցը ձերբակալում են, բերում կաղզուան, բանտարկում, Կուկունեանին մի առանձին սենեակում: Խսկ միւսներին՝ երկու սենեակում: Խար գիւղի այդ տըխուր անցքը տեղի ունեցաւ սեպտեմբերի 26-ին 1890թ. Բանտարկվածների թիւը սկզբում 36 էր. փախածներից կարողանում են բռնել դարձեալ 7 մարդ, որոնց ևս բերում են կաղզուան: Այդպիսով մեր բանտարկեալների թիւը հասնում է 43-ի: Կաղզուան էին բերել և Խարում վիրաւորված Դարբին Ստեփանին, որը կարձ ժամանակից յետպ վախճանվում է: Սա էլ այն միւս մօր նուէրն էր. «Էսոր հետներդ տարէք, թո՛ղ զոհի այդ սուրբ գործի համար:»

Կաղզուանից տղոցը պիտի տանէին Պարս: Այնտեղ լուր է տարածվում, որ Հոկտեմբերի 20-ին բանտար-

կեալներին բերում են: Ղարսի ժողովուրդն աչագին ևմբերով գնում է գէպի կազզուան տանող ձանապարհը, ժամերով սպասում: Հոկտ. 24-ին միայն կէսօրից յետոյ տղերքը շղթայակապ, շրջապատված ոստիկաններով, կազակներով և հետեւակ զինւորներով, մուտք գործեցին Պարս: Տիսուր էր տեսարանը: Տղերքն իրենք ուրախին, գէմքերի արտայայտութիւնը զուարթ. յուսահատութեան նշոյլ անգամ չէր երեսում: Երբ խումբը մօտենում է ժողովադին, վերջինս բուռն ոկեցցէք է արձակում, յուսադրում, քաջալերում իր հերոսներին: Ժողովրդի այդ անհուն սիրոյ արտայայտումը նրանց խրախուսում, ոյժ, հաւատ էր ներշնչում: Նրանք տեսնում էին, որ իրենց սկսած գործը, իրենց թափած սկզբնական ձիգերն անհետեանք չեն մնացել այլ խոր արձագանք էին գտել ժողովրդի սրտում: և այժմ այդ ոկեցցէները այն արձագանքն է, որ նրանք լսում են:

Ղարս բերելուց յետոյ նրանց բանտարկում են բերդում: Կուկունեանին դարձեալ առանձին:

Խմբի փախած միւս անդամների մասին՝ թէ ուր են նրանք կամ ինչ են անում, յայտնի պատճառով մենք լրում ենք: Այժմ հետեւնք զարաբաղցի Աբրահամին:

Ինչպէս մենք տեսանք, Խարում պատահած ացքի ժամանակ Աբրահամը վիրաւորվում է: Զաքարը նրան փախցնում, բերում, հասցնում է մի հայ գիւղ ուր բը-

ժշկում են նրա վէրքը: Առողջանալոց յետոյ նրա առաջին ցանկութիւնն է լինում նախ և առաջ վրէժինդիր լինել Սարդարի մահուան: Նոյն թուականի նոյեմբ, 14-ին նա սպանում է Մրէ և Խսա քրդերին: Նա երազում էր տղոցը նշոյն իսկ Ղարսի բերդից ազատել: Նա չէր կարողանում տանել որ իր ընկերների մի մասը բերդում կալանաւոր ընկած մնայ: Նա յաճախ նամակներ էր գրում տղոցը. „Կամ ձեզ կազատեմ, կամ բերդի տակ կը գտնեն իմ գիւակը“:

Այդ նպատակով նա ուզում էր խումբ կազմակերպել: Ապամել մի խումբ այդպիսի յանդուգն ծրագրով՝ այնքան էլ հեշտ չէր, նոյն իսկ անիրագործելի: Այս միտքն Աբրահամին շատ էր զբաղեցնում: իսկ իրագործել չէր յաջողվում: Այդ նրան գրգռում, կատաղեցնում էր: Ճենց այդ էր պատճառը, որ նա աջ ու ձախ շատ քրդեր ու թուրքեր էր սպանում: Նրա անվեհերութեան չափ ու սահման չկար, պատահել են գէպքեր, որ նա մենամենակ 10 հոգու դէմ է դուրս եկել և բոլորին էլ հալածել: Նրա քաջութիւնն առասպելական էր դառել: Քրդերը նրան ոչ հայոց սբ. Սարգիսին անուանում: Նա մի այնպիսի սարսափ էր ձգել Ղարսի ամրոցը նահանգում: որ մի ժամանակ այդ նահանգի ոստիկանութեան բոլոր ուժերն ուղղված էին նրան բոնելու: Ոստիկանութեան բոլոր թափած ձիգերն ի զուր էին կորչում: Աբրահամն ամեն տեղ էր, բայց ոչ մի

տեղ էլ չէր յաջողվում նրան բռնել: Պատահել են դէպքեր, որ գաւառապետը մի և նոյն գիշերը նրա հետ միասին մէկ տան են եղել և խեղճը չի էլ կասկածել որ իր փնտրած Աբրահամը հենց իր մօտ է եղել:

Վարսի նահանգից Աբրահամն անցնում է Երևանեան նահանգը, ուր նա պիտի միանար յայտնի ողազաղերից հետ: Բայց այսակը նա զոհ է գնում մէկ կեղտոտ մատնութեան: Նրան ձերբակալում և զարս են բերում: Որ այնտեղ իր բանտարկված ընկերներից կարողանան հաստատ իմանալ նրա զարաբաղցի Աբրահամը լինելը: Բայց տղերը, հասկանալով բանի էութիւնը, բոլորովին անծանօթ են ձեւանում: Կառավարութիւնը կողմակի կերպով համոզվում է, որ իրօք նա Աբրահամն է: Նըրան պահում են Վարսի բանտում: Բայց Աբրահամն այն բնաւորութիւններից չէր, որ հանգիստ նստէր. նա տըղոց հետ խորհուրդ է տեսնում և փախչելու ծրագիրը կազմում: Նրանց միանում են և երկու երեք թուրքեր: Արդէն ամեն ինչ պատրաստ է լինում, մնում է միայն պատից մէկ քար հանել ու գիշերը փախչել: Բայց ինչպէս է պատահում, բանտապետը գլխի է ընկնում, գալիս է աղոցը մարակով ծեծում: Վերջիններս սաստիկ վրդովում են, յարձակվում են բանտապետի վրայ, ծեծում, փոխարէնը հատուցանում: Այս դէպքի համար նրանց բոլորին շղթայակապ ոկարցեր՝ են գցում: Աբրահամը տեսնում է, որ այդ ծրագիրը շուտով չի կարելի ի-

բագործել: Յայտնում է իր ընկերներին, որ ինքն այլ ես չի կարող դիմանալ բանտապին կապանքներին և չենց առաջին պատահած դէպքից պիտի օգտվի — կամ կազատվի, կամ կը մեռնի: Նրան միանում է և մի թուրք: Մի օր քննիչի մօտից վերագառնալիս՝ պէտք էր իրագործէին իրենց ծրագիրը: Աբրահամը պայմանանշան է անում թուրքին, մի բուռը լի տաքեղը (պղպեղ) ածում զինորներից մէկի աչքը և սկսում է փախչել, ենթադրելով, որ թուրքն էլ միւս զինուրի աչքերը լցրած կը լինի: Բայց նենդամիտ թուրքը դրժում է իրենց պայմանը, ոչնչ չի անում, այլ հանգիստ մնում է իր տեղը կանգնած: Այդ միջոցին ազատ մնացած զինուրը հրացանն արձակում: Աբրահամին մահցու վերք է տալիս: Վարաբաղի քաջ զաւակը հոգին աւանդում է շուտով:

---

Տղերը բանտում ընկած, ամիսներով սպասում են իրենց դատին: Դատը տեղի է ունենում, ամբողջ շաբաթներ է տևում: Տղերը իրենց պաշտպանում են, նրանք ոչ մի վնաս չեն հասցրել ուսւ կառավարութեանը. Նրանց դիտաւորութիւնը, նրանց սուրբ նպատակը բոլորին էլ յայտնի է: „Մենք գնում էինք Տաճկահայատան, յայտնում են տղերը թէ՛ քննիչն և թէ՛ նահանգական դատարանի առջե, մենք գնում էինք Տաճկահայատան մէր եղբայրների վրէժը նրանց արիւնը ծծող քրդերից և տաճիկներից հանելու, մենք ուզում

Էլնք միայն օգնութեան ձեռք կարկառել այդ դարերով տանջված, խաղաղ ժողովրդին. մէնք ուսւ կառավարութեան գէմ չէնք: Մեզ զարմացնում, ապշեցնում է ուսւ կառավարութեան բռնած այդ պախարակելի դիքը, ընթացքը<sup>Ա</sup>: ‘Նրանք չեն ծածկում իրենց զզուանքը դէպի կառավարութիւնը, նրանք այդ յայտնում են հենց դատարանում խուռն բազմութեան և դատաւորների առջև: Խսկ դատարանը, ինչ վճիռ է կայացնում նա: Նա արդարացնում է Սարդարին և Մուկուչին սպանող քրդերին և դատապարտում է այդ խումբ անձնազոհ երիտասարդներին: Դատարանի պարսաւելի վճիռը բոլորին էլ յայտնի է. տղոցը տաժանակիր աշխատանքի են դատապարտում: Գործը նահանգական դատարանից անցնում է պալատը: Զանկեր են գործ գնում, որ դատապարտեալների պատիժը գոնէ քիչ մեղմացնեն, բայց անգութ դատաւորներն անյոզդողդ են մնում, նրանք մազաչափ անդամ չեն փոխում դատարանի անարդար վճիռը: 27 Հոգի դատապարտվում են տաժանակիր աշխատանքի 12-ից 20 տարի ժամանակով: ‘Նըրանց մի մասն արդէն Աիթիրիայի խորքերումն է, միւսը գեռ ձանապարհին:

Սակայն տղոցը ցաւ էր պատճառում ոչ թէ դատարանի ծանր վճիռը, ոչ թէ իրենց վիճակված երկարամեայ դաժան կեանքը, այլ դիմաւորապէս այն հանդամանքը, որ իրենց դատում, դատապարտում են ոչ իբրև քաղա-

լաքան յանցաւորների, այլ իբրև լոկ քը է ական, իբրև հասարակ աւազակների, չնայած տղոց պարզ խոստովանակներին, չնայած բազմաթիւ վկայութիւններին խօսուն ապացոյցներին:

Տղերըն աքսոր են գնում, նրանք տասնեակ տարիներով տաժանակիր աշխատանքի են գնում, բայց նրանք չեն յուսահատվում: ‘Նայեցէք աչա այս գրքոյկին կցած պատկերների խմբին: Տեսէք, թէ ինչ են արտայայտում այդ դէմքերը.—ուրախ, քաջարի, վատահի, համոզված իրենց գործի արդարութեան մէջ և շատերի դէմքերի վրայ հեգնական ժպիտ դէպի իրենց կապանքները: Յոյս, հաւատ է ներշնչում պատկերների այդ խումբը: Այս, նրանք չեն կորցրել իրենց հաւատը դէպի յեղափոխական գործի յաջողութիւնը նրանք չեն յուսահատվում: Նրանք չեն ընկճառում, որովհետեւ իրենց յետելից թողնում են արդէն վերածնված մի ժողովուրդ: Այն տեսաբանները, անձնազոհութեան օրինակները, ցոյցերը, որոնք տեղի էին ունեցել մինչև տղոց բանտարկվելը և յետոյ, կենդանի ապացոյցներ են ժողովրդի վերածնութեան այդ մէծ գործին: Նայեցէք, տեսէք, թէ ինչպէս է ժողովուրդը դիշեր ցերեկ անդադար մտածում, չոգում իր բանտարկեալների համար: Ի՞նչպիսի առատութեամբ են բերում զանազան կերակուրներ, թէյ, շաքար, ծխախոտ, փող, նայեցէք ինչպէս ժողովուրդն ահագին խմբերով փողոցները լցված, ժամերով սպասում

Է տղոց բազնիք տանելում. նա տեսնում է նրանց, ողջունում, խրախուսում: «Մենք էլ ձեզ կը հետելիք, մենք էլ կը գնանք զոհվելու», «լսվում է ամբոխի միջից: Տեսէք, ինչպիսի ոգեռորշած նամակներ են բանտը տեղում Կուկունեանի հասցեով: Այդ նամակներից մեկում ի միջի այլոց կարդում ենք հետևեալ տողերը. »Կունեանեանն իր գործերով զարթեցրեց հայ ազգը Խորքնից... իւրաքանչիւր ուրախ սեղանի ժամանակ առաջն կենացը հայրենիքին է Կուկրված լինում, երկրորդը հայրենիքի նախավկայ Կուկունեանին... 1890 թուականին ծնունդ է առնում ազգը... Այսուհետեւ Կունեանն էլ չի պատկանում ոչ իրեն, ոչ էլ իր ծնողներին, այլ կազմում է ամբողջ ազգի սեպհականութիւնը. Նրա անունը պիտի անցնի պատմութեան էլերը... Աստուած անխիզձ կը լինի, եթէ չազատի Կուկունեանին դաժան բռնակաների ձեռքից»...

Օր օրի վրայ ժողովրդի համակրութիւնը սաստկանում է. ստեղծվում են բազմաթիւ ոտանաւորներ, երդեր՝ նուիրած խմբին, նրա գործերին: Դրանք բերանից բերան են անցնում; կրկնվում երգվում: Բերենք այստեղ դրանցից մեկը.—

Մնաք բարեաւ, սուր, հրացան,  
Մնաք բարեաւ, լնկերներ,  
Անցան օրեր ազատութեան,  
Եկան բանտ ու կապանքներ:

Երբ ես վառված ատելութեամբ  
Դէա գարշելի բռնութիւն,  
Թուչում էի կատաղութեամբ  
Տալ եղբարցս օգնութիւն,  
Այնժամ անյագ սիրտս լի էր  
Մաքուր և սուրբ իշճերով  
Կեանքիս գնով նա ուզում էր  
Տալ խեղձ հային սէր, գորով:  
Բայց թշնամին ինձ թակարդեց,  
Պղծեց սէրս սրբալից,  
Անպատւութեան դրոշմ դրեց  
Գործի վրայ ոխալից:  
Բայց ծանր չեն կապանքներս,  
Մութ բանտը չէ ինձ տանջող.  
Ո՛չ, այլ ևս թշնամու դէմ  
Զեմ անյողողդ մարտնչով:  
Սակայն եթէ նորից ազատ  
Վիճակված է ինձ լինել  
Այնժամ սուրը ձեռս առած՝  
Կելլեմ նորից մարտնչել:  
Եւ կատաղած սրտիս յագը  
Այդ սրովը ես կառնեմ,  
Եւ թշնամու գարց վարմունքը  
Իր երեսին կը զարնեմ:  
Աչա դարձեալ մի այլ ցոյց Յարութիւն Թէքիրդաղ-

յու թաղման ժամանակ: Խարից փախչելուց յետոյ շուտով  
նա հիւանդանում և մեռնում է: Վարսում նրան ոչ ոք  
չէր ձանաչում: բաւական է, որ նա ևս խմբի անդամներիցն է: Ամեռող Վարսի հայ հասարակութիւնը ներկայ  
էր նրա թաղման հանդիսին: Այդ օրը ձիւն էր գալիս  
և սաստիկ ցեխ էր: Երբ դադաղը գերեզմանն են իջեց-  
նում, ժողովուրդը խորին յարդանօք չոքում է ցեխի,  
ձիւնի մէջ, գլուխ խոնարհում թանդադին նշխարին: Այդ  
յարդանքը, այդ ահագին բազմութեան բարձրաձայն լա-  
ցը մարդու փշաքաղում, վրան սարսուռ էր ձգում: Ինչ  
տխուր, բայց և ինչ վեհ, ազդու տեսարան էր այդ:  
Այդ թաղումը երկար ժամանակ անջնջել կը մնայ  
դարսեցիների յիշողութեան մէջ:

—o—

Ընթերցո՞ղ մենք վերջացնում ենք: Մենք բաւական  
թոյլ կերպով գծեցինք Կուկունեանի խմբի արշաւանքից  
մի քանի էպիզօդներ, մի քանի գծեր: Մենք կարող էինք  
այստեղ յառաջ բերել և մի քանի եզրակացութիւններ,  
որ մեր մէջ յղացան այդ գէպքերը պատմելիս. մենք այդ  
չենք անում, այլ ձեզ ենք թողնում: Այսքանը միայն կա-  
ւելացնենք. հայ ազգն այժմ անցնում է յեղափոխական  
բովով. հայկական շարժման ալիքներն արդէն ծփում են  
ամենուրեք: Նրա յաջող ելքը ձեզանից է կախված . . .

## 1890-ի Շ. Ա. Բ. Ժ. Ա. Ն. Ն. Ա. Հ. Ա. Տ. Ա. Կ. Կ. Ն. Ե. Բ. Բ.

1. Աթանաս Զաշանեանց, Գողթան գաւառի Ցղնա  
դիւղից, թաղուած կաղզվանում:

2. Վարդան, Վանեցի, թաղուած կաղզվանում:

3. ԱրքահամՏէր-Անդրէսեան, Դուշէթցի, թաղ-  
ուած Բաշ-Քեօյում (Ո.-Տաճկ. սահմանի վրայ):

4. Նատօ Շահնազարեան, Բուլանիի Շէյխ-Եա-  
ղուբ գիւղից, թաղուած կաղզվանում:

5. Սարդար Աւետիսեան, Շիրակյ Ղալթաղչի  
գիւղից, թաղուած կաղզվանում:

6. Դարբին Ստեփան, Կրզրումցի, 78 թւին Ղարս  
գաղթած. թալ. կաղզվանում:

7. Մկրտիչ Պօղոսեան, Բաշ-Քեատիքլար գիւղից.  
թաղուած կաղզվանում:

8. Յարութիւն Յովհաննիսեան, Ոստոստեցի.  
թաղուած կաղզվանում:

9. Սահակ Մինասեան, Արցախու Քէշիշ-Քեանդ  
գիւղից. թալ. կաղզվանում:

10. Արքահամ Աղամալեան, Արցախու Ուշանա-  
բազ գիւղից. թաղուած Ղարսում:

11. Մկրտիչ Մուղդուսեան, վախճանուեցաւ Տըփ-  
խիսի Մետեխիքանդի հիւանդանոցում 94-ի Ապրիլին:

12. Գրիգոր Էքմէքչեան, Ախալցխացի. վախճան-  
եցաւ Բաթումի բանտում 94-ի Օգոստոսին:

Digitized by Google

ամենի պահանջ առ կար ըստ մասնաւության ի.

Հայության հայութական պարագաներ

Հ. Յ. Դաշնակցութեան հրատարակութիւնները.

1. Ապստամբական Ոդի.
  2. Յեղափոխական կեանքից.
  3. Գաղտնի Տպարան,
  4. Գիտական Սօցիալիզմ, Փ. Էնգելս.
  5. Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիրը:

Գըքոյկներ ստանալու համար դիմել „Դրօշակ“-ի  
խմբագրութեան:

3257

3258

3259

3260

2017

